

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՅՍ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆ ՈՒՆԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ: ՈՒՍՏԻ ՆԱԽԱՊԵՍ ԴԻՏԱՐԿԵՔ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԿԱ ՆՄԱՆԱՏԻՊ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԵՔ ՎԱՐԿԸ ՄԱՐԵԼՈՒ ՁԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Ակտիվ հանգիստ» Ջրոսաշրջության վարկերի տրամադրման պայմաններն ու սակագները	
Վարկերի տրամադրման աշխարհագրական շրջանակը	Հայաստանի Հանրապետություն
Արժույթը	ՀՀ դրամ
Տրամադրվող գումարի մեծությունը	նվազագույնը՝ 200.000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 2.000.000 ՀՀ դրամ
Վարկի տրամադրման եղանակ	Ներկայացված փաստաթղթերի հիման վրա միանվագ, անկանխիկ փոխանցվում է Տուրիստական ընկերության, հյուրանոցի, հանգստյան տան համապատասխան բանկային հաշվին
Տարեկան անվանական տոկոսադրույքը	սկսած 10%-ից մինչև 24%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	10.54%-ից մինչև 67.82%
Վարկի դիմում-հայտի ուսումնասիրության վճար	5.000 ՀՀ դրամ
Վարկի գումարի տրամադրման միջնորդավճար	Տրամադրվող գումարի 0-2%-ի չափով
Վարկի սպասարկման վճար	Ամսական՝ 0-ից մինչև 5000 ՀՀ դրամ
Վարկի մայր գումարի վաղաժամկետ մարում	Սահմանափակումներ չկան
Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցները	2 ֆիզիկական անձի երաշխավորություն կամ անշարժ/շարժական գույքի գրավադրում
Դեպոզիտային պահատեղեր	մինչև 20 օրացույցային օրը՝ անվճար

Տոկոսագումարների հաշվարկման և վճարման կարգը	Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ օրական կտրվածքով և ենթակա է վճարման ամսական պարբերականությանը
Ժամկետանց վարկի գումարի գծով հաշվարկվող տույժ	0.13% չափով տույժ ժամկետանց վարկի մայր գումարի նկատմամբ՝ ամեն ժամկետանց օրվա համար
Ժամկետանց տոկոսագումարի գծով հաշվարկվող տույժ	0.13% չափով տույժ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ՝ ամեն ժամկետանց օրվա համար
Վարկառուի (Համավարկառուի) վարկային պատմության հանդեպ պահանջներ	1. Գործող վարկը չպետք է լինի ժամկետանց վարկային պատմության ստուգման պահին: 2. Ժամկետանց օրերի քանակը բոլոր վարկերի գծով վերջին 12 ամիսների ընթացքում չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը:
Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետը	1 աշխատանքային օր՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո
Երաշխավոր	1. Երաշխավոր՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձ 2. Երաշխավորի հանդեպ պահանջներ՝ վարկառուի հանդեպ պահանջների համանման
Աշխատանքային ստաժ	1 6 ամիս չընդհատված աշխատանքային փորձ վերջին աշխատանքային վայրում: 2. Հաճախորդի հիմնական աշխատանք չունենալու, թոշակառու կամ ժամանակավորապես անաշխատունակ լինելու դեպքում նա պետք է ունենա այլ եկամուտներ: Եկամուտների տակ հասկացվում են վարձակալությունից ստացված եկամուտները, թոշակները, կազմակերպություն հանձնած բերքի (ապրանքի) դիմաց գյուղատնտեսական եկամուտներ, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ, ինչպես նաև այլ եկամուտներ: